

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԿՈՐ—ՆԱԽԻՋԵՆԻԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՆՑԵԱԼԸ 1



ախիջեանի ուսումնարանական գործի կանոնադրութիւնը ու հաստատ հիմքի վերայ գրուելու ժամանակը հին չէ. նորա սկիզբը համապատասխանում է ընդհանրապէս Ռուսահայոց գոյն գործի կանոնադրութիւնը ժամանակամիջոցին, որ ինչպէս յայտնի է համարուում է 59 թուականը, Անկասկած մի քաղաքի համար ուսման գործի 35 ամեայ հասակը մի մեծ բան չէ. բայց ի նկատի առնելով, որ մեր ազգի մէջ նորա քաղաքային ինքնուրոյն կեանք չունենալու պատճառով, ամեն մի յառաջագիմական քայլ լինի նա ուսումնարանական կամ մի այլ ազգը գէպի բարոյական վերածնութիւն տանող ասպարիզում: ձեռք է բերուում մեծ դժուարութեամբ, մենք մեր քաղաքի ուսումնարանական գործի 35 ամեայ անընդհատ և կանոնաւոր զարգացումն համարում ենք մի մեծ գործ արժանի խորին ուշադրութեան: Մինչև 59 թուականը թէ բուն Հայաստանում և թէ նորա գաղութներում Հայոց ուսումնարանական գործը գտնուում էր իւր հին շրջանում, որ կարելի է և ընդունուած է իսկ կոչել «խալֆայական»:

Հին շրջան մենք գորան կոչում ենք, յայտնի բան է: համեմատաբար, որովհետև նա ևս իրանից առաջ եղած շրջանների համեմատութեամբ նոր է: Մեզանից շատերը ականատես են եղել նորան, շատերը ևս լսել ու տեղեկութիւն են ստացել նորամասին առաջին կամ երկրորդ ձեռքից, նամանականք որ մինչև ցայսօր դեռ այդ շրջանի դպրոցներ

1. Այս հետաքրքրական ուսումնասիրութիւնն ընտրելով նախընթաց տարումս «Արարատ» ին ուղարկուած յողումների միջից, տպագրում ենք մի քանի յապաւումներով, որի համար յոյս ունինք, որ յարգելի նշխարները ներողամտ կը լինի, աչքի առաջ ունենալով «Արարատ»-ի փոքր ծաւալն ու յապաւումների ընդհանուր բնատրութիւնը, որով ուսումնասիրութեան ամբողջութիւնը չէ խանգարուում: Դոմբ.

կարելի է տեսնել Ռուսահայոց խուլ անկուններում իսկ Յաճկահայոց ու Պարսկահայոց շատ տեղերում խալֆայականութիւնը դեռ միակ տիրող սխառման է: Հայոց հեղինակներից շատերն են իւրեանց գրութեանքներում նկարագրել այդ դպրոցները և այդպիսով նոցա յիշատակը անմահացնելով՝ հասցրել են նոցա պատմութիւնը յետագայ սերնդին: Ո՛վ չէ կարգացել Վաֆիֆիի «Կայծեր» կոչուած հեղինակութեան մէջ խոշոր գոյներով ներկայացրած Տէր-Թոգլի դպրոցի նկարագրութիւնը կամ Նազարեանցի յիշած Ղարաբաղցի Պողոս վարդապետի դպրոցի մասին, որ տեղ ինչպէս ինքը Նազարեանցը ասում է, «գլուխ էր ջարդում 2 ամիսն քերականութեան, Ազոնց Ստեփաննոսի ճարտասանութեան և Թեոսուրոսի վերայ Խաչատուր Արովանը»: Այդ շրջանում կանոնաւոր դպրոցներ չկային, թէև եղածների թիւը խիստ մեծ էր: Ամեն մի վարդապետ, քահանայ, տիրացու և վերջապէս ամեն գրագէտ մարդ վարժապետ էր: Դպրոց բանալու համար դժուարութիւն չկար, որովհետև գորա համար հարկաւոր չէր ոչ թոյլատրութիւն, ոչ էլ նիւթական միջոցաւական էր, որ վարդապետը, քահանան, տիրացուն կամ գրագէտը ցանկութիւն յայտնէր երեսայ կարգացնելու, իսկոյն գրացի մանուկներից կկազմուէր մի խումբ և կհաւաքուէր վարժապետի սենեակներից մէկում—և ահա դպրոցը պատրաստ էր: Բացի սղայոց դպրոցներից, կային և օրիորդաց դպրոցներ, այդ տեղ վարժապետները գրագէտ պառաւներն էին կամ կոյսերը: Այն դպրոցները միայն գրագիտութիւն ու ասղնագործութիւն էին սովորեցնում: Կոյսերի մօտ ուսանում էին միայն աղջիկներ, իսկ պառաւների մօտ շատ անգամ աղջիկների հետ միասին ուսանում էին և մանչեր: Դոքա այն ժամանակուայ երկեսն խառն ուսումնարաններն էին:

2

Այսպէս էր ահա Հայոց հին «խալֆայական» կոչուած շրջանի ուսումնարանական գործը, այսպէս ընդհանրապէս ուսումնարանական գործի դրութիւնը և Նախիջևանում: Քաղաքիս եկեղեցիների բակում գտնուած փոքրիկ տնակներն էին Նախիջևանցւոց առաջին դպրոցները, որ մինչև անգամ՝ դպրոցի անուն ևս չէին կրում: Նոքա կոչուում էին «Օգաներ» և զանազանութիւն էին միմեանցից եկեղեցիների անունով, որոնց բակում գտնուում էին «Ս. Համբարձում ժամի օգայ, Ս. Թորոսի, Ս. Աստուածածնի» և այլն. անուններ, որ մինչև ցայսօր դեռ կարելի է լսել ժողովրդի բերանից: Քահանա-

ներն ու տիրացուներն, ազէտ աշխարհական մարդիկ և պառուներն էին քաղաքացիների առաջին վարժապետները, որոնց մի քանիսի անունը մինչև ցայսօր դեռ կարելի է լսել շատերի բերանից, Ո՞վ չէ լսել նշանաւոր Օքսենտ Եղիշէի անունը, որի դպրոցում իւր առաջին կրթութիւնը ստացաւ Միքայէլ Նալբանդեանցը. ո՞վ չէ լսել տիրացու Յարութիւնի կամ Թուշիկ պառաւի անունները, որոնց մօտ կարգաւ—գրեւէն սովորել մեր քաղաքացիներից շատերը, Ապա Սերովքէ վարժապետը, Տէր—Վարրիէլ Պատկանեանը, Մկրտիչ Եգեանեանը, որոնց մօտ ամբողջ երկու—երեք սերունդ է դաստիարակուել, Պոցա մօտ էին տեղական ոճով «վարպետ գրնում» Նախիջևանի մանուկները, վարժապետներն էլ չէնց շատ անգամ վարպետ էին կոչուում, Թուշիկ պառաւը յայտնի էր միայն «Թուշիկ վարպետ» անունով, Յայտնի բան է, զանազանութիւն կար այդ վարժապետների մէջ, ինչպէս որ զանազանութիւն կար և Հայաստանի վարժապետների մէջ, բայց այդ զանազանութիւնը միայն գիտութեան ու գասընթացքի ընդարձակութեան մէջ էր, իսկ ընդհանրապէս բոլոր դպրոցներում ևս նոյն կարգ ու կանոնը, նոյն դասաւանդութեան եղանակը, նոյն բռնակալական հոգին և նոյն դպրոցական ուղղութիւնն էր թափաւորում, Առաջին երեքի և նոցա նմանների վարպետանոցները հասարակ գրագիտութեան տեղեր էին միայն՝ նման Ռուսաց այժմուայ շատ գիւղերում գտնուած դպրոցներին, որ կոչուում են «ШКОЛЫ грамотности»: Նոցա գիտութիւնը վերին աստիճանի սահմանափակ էր, Հանգուցեալ Նալբանդեանցը մի քանի շաբաթ միայն յաճախելով Եղիշէի դպրոցը, իրրեւ ուշիմ՝ մանուկ, ամեն բան, ինչ որ այն տեղ դաս էր արուում, սովորեց, և այլ ևս իւր համար ուսանելու բան չգտնելով, գնաց Տէր-Վարրիէլի մօտ, խելո՞ւ տիրացուն շատ նեղն էր ընկնում հարցասէր մանուկի հարցմունքներին բաւականացուցիչ պատասխան տալու պատճառով, Եւ առհասարակ այն ժամանակուայ Նախիջևանի հոգևորականութիւնը կրթութեան ու գիտութեան կողմից Հայաստանի իւր ծառայակից եղբայրներից շատ յառաջ չէր գնացել, նա այն աստիճան ազէտ էր, որ 45 թուականին երբ երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսը Նախիջևան ժամանեց, բազմաթիւ քահանաներից ու տիրացուներից միայն Տէր-Վարրիէլ քահանային և Նալբանդեանց տիրացունին համապատասխան գտաւ իւրեանց կոչմանը, Քաղաքիս հոգևորականութեան տգիտութիւնը յայտնի եղաւ մի գիպուածով, որ անհետաքրքրական չէ. Հայրենեաց պաշտպան կաթողիկոսը իջևանել էր Զեռգին Վարպետի տանը և ըստ իւր սովորութեան, ամենայն

օր ժողովրդից բազմաթիւ այցելուներ էր ընդունում, Աղաների հետ կաթողիկոսը խօսում էր ազգային—հասարակական գործերի վերայ, միջին դիրք ունեցող մարդկանց մխիթարում ու քաջալերում էր, հասարակ ժողովրդին աջ էր տալիս ու արձակում և առ հասարակ ամեն մարդ ազատ մտադրուէր նորա մօտ, Մէկ օր էլ մտնում է Ահհափառի մօտ մի մարդ և աջը աւնելուց յետոյ, մատուցանում է նորան մի ցուցակ, յայտնելով, որ տեղիս քահանաներից մէկը հարսնախօսութեան միջնորդ լինելով, այս ցուցակով օժիտ է խոստացել, բայց իւր խօստմունքը չէ կատարել, Հոգևոր տէրը կոչել է տալիս քահանային, որի ձեռքով գրած էր ցուցակը և հրամայում է կարգաւ, բայց քահանան կակաղում է և դժուարանում է ջոկել իւր ձեռքով գրածը, Սիւս օրը բոլոր հոգևորականութիւնը հրաման է ստանում հաւաքուել Ահհափառի ընդունարանում, Կաթողիկոսը գիմնելով հոգևորականներին, ասում է՝ «ո՞վ որ ձեզանից քերականութիւն գիտէ, թող առաջ գայ», բոլորը լռում ու ապշած են մընում և միայն Պատկանեան Տէր-Վարրիէլն է բացառութիւն կազմում, Այն ժամանակ կաթողիկոսը հրամայում է, որ բոլորեքեան յաճախեն Մկրտիչ Եգեանեան վարժապետի մօտ, որ, իբրեւ կաթողիկոս, յայտնի էր «ձուկ ուտող» անունով, և սովորեն այնքան ժամանակ, մինչև որ արժանանան վկայական ստանալու նորանից, առանց որի, սպառնում է տիրացուներից ոչ որին քահանայ չձեռնագրել, Յայտնի բան է, Սերովքէ վարժապետը, Պատկանեանց քահանան և Մկրտիչ Եգեանեանը իւրեանց գիտութեամբ շատ վեր էին Օքսենտից, Յարութիւնից, նոցա դպրոցներում ուշիմ և աշխատասէր մանուկը կարող էր բան սովորել, Միքայէլ Նալբանդեանցը իւր Հայոց լեզուի և կրօնի գիտութիւնը ստացել էր Պատկանեանից, Բայց գժբաղդաբար տգիտութիւնը մարդու մէջ չէր, այլ այդ ժամանակուայ հայկական կեանքի, նորա ոգու մէջ, իսկ մարդիկ միայն ժամանակի որդիքն էին, Նալբանդեանցը, որ իբրեւ տիրացու միւսների հետ հաւասարապէս հրաման ստացաւ Ներսէս կաթողիկոսից, Եգեանեանի մօտ Բերականութիւն սովորելու, Աննեանի Մխիթարեան վարժարանում կրթութիւն ստացած գիտնական վարժապետի մօտ իւր մտքի համար ոչ մի նիւթ չգտաւ, որ արդէն սովորած չլինէր իւր առաջուայ վարժապետ Տէր-Վարրիէլ քահանայից, Նա մի քանի ժամանակ «ձուկ ուտող»ի մօտ յաճախելուց յետոյ, բացէ ի բաց մերժեց նորա մօտ գնալու, ասելով՝ «ինչ որ դու սովորեցնում ես, ես արդէն շատ ժամանակ է որ գիտեմ», Եւ նա փորձով ցոյց տուեց, որ իւր յամառութիւնը կամակորուրթեան կամ գո-

առողութեան արդիւնք չէր, այլ վարժապետի մօտ
ւոր զարգացման պակասութեան արգասիք, Ասում
են, կաթուղիկոսը բարկացաւ յանդուգն տիրացուի
վերայ և նորա կամակորուծիւնը կոտորելու համար
հրամայեց նորան մի գրորառ շարադրութիւն գրել,
սակայն երբ կարգաց նորա գրածը, հրամայեց այլ
ևս չստիպել նորան, որովհետեւ համոզուեցաւ և
հաւատաց տիրացուի ասածների ճշմարտութեանը:

3

Խալֆայականութիւնը դարուս հայերի համար
նոր բան չէր, նոքա այդ ժառանգութիւն էին ստա-
ցել և միայն իւրեանց հասկացողութեան ու ժամա-
նակի հոգուն համեմատ զարգացրել, կերպարանա-
փոխել և ընդարձակել էին: Անցեալում հայերս
ունեցել ենք մի քանի ուսումնարանական շրջան,
որոնք թէև ընդհանրապէս մէկ ուղղութիւն մէկ
հոգի ունէին, բայց ի մասնաւորի շատ էին զանա-
զանութեամբ միմեանցից:

Առ հասարակ բոլոր հին շրջանի ուսումնա-
րանական գործի ուղղութիւնը կրօնական էր, իսկ
նպատակը մասնաւոր, անհատական: Աւսումը այդ
շրջանում ժողովրդական, ընդհանրական չէր, նա
սեփականութիւն էր հոգեւորականութեան, իսկ աշ-
խարհականներից միայն անհատներին:

Ժողովրդի լուսաւորութիւն, ընդհանուր կըր-
թութիւն և ազգային լուսաւորութիւն նոր հասկա-
ցողութիւններ են: Աւսումնարան էր յաճախում
կարգաւ—գրեւէր սովորում միայն նա, որ պատ-
րաստութեամբ հոգեւորական դառնալու, իսկ բուն
ժողովուրդը իւրեան ուսումնարանից հեռու էր պա-
հում: որովհետեւ ուսման կարօտութիւն չէր զգում:
Այն ժամանակուայ ընդհանրացած կարծիքով ուսու-
մը աշխարհականին պէտք չէր, չէ՞ որ բոլորեքեան
տէր—տէր, տիրացու կամ վարդապետ դառնալու
չէին, այս պատճառով էլ ուսումնարաններն էլ գըլ-
խաւորապէս հոգեւորականացուների համար էին պա-
հում: Սակայն ուսումնարանական գործի այդ ընդ-
հանուր հոգին և ուղղութիւնը հին շրջանի զանա-
զան ժամանակամիջոցներում զանազան տեսակ էր,
զանազան ծաւալ ունէր. նկատելի է մի տեսակ աս-
տիճանաբար փոխանցումն, մի տեսակ հետեւողա-
կանութիւն, որով մի ժամանակամիջոց փոխանակում
է միւսին, բերելով իւր հետ ուսումնարանական
գործի վերաբերութեամբ նոր հայեացք, նոր դա-
ղափար. նկատելի է փոքրից դէպի մեծը, սահմա-
նափակից դէպի ընդհանուրը դիմելու ձգտումն,
գորա հետ միասին և կրօնական գաղափարից դէպի
կրօնական—ազգայինն անցնելը և այդ վերջինի աս-
տիճանաբար զարգացումն, Հեթանոս Հայերի ու-

սումնարանները նոյն իսկ մեհեաներն էին, որտեղ
քրմերը պատրաստում էին քրմացուներին, և, որով-
հետեւ քրմութիւնը ժառանգական էր, ուսումնա-
րաններն ևս համարեա թէ միայն քրմերի որդիների
համար էին, ուստի և նոքա կրում էին մասնաւոր,
կաստային բնաւորութիւն, ժողովուրդն այդ ուսում-
նարանների մասին ոչ տեղեկութիւն, ոչ էլ հասկա-
ցողութիւն ունէր և, որովհետեւ ազգը ուսումնա-
րանների գործում մասն չունէր, ուրեմն նոցա մէկ
ազգայնութիւն ևս չկար, Այդ արդէն քրմերի քա-
ղաքականութիւնն էր ամեն ինչ որ միայն մեհեան-
ներին և իւրեանց էր վերաբերում: շրջապատել մի
առանձին խորհրդաւոր գաղտնիքով, նոքա դորանով
իշխում էին ժողովրդի վերայ, Ամբոխը, որ գիտու-
թիւնը և ճշմարտութիւնը միայն աստուածների
սեփականութիւնն էր համարում: տեսնելով իւր
քրմերի գիտութիւնը, նոցա վերայ սովորում էր նա-
յել իրրեւ աստուածների գիտութեան և իմաստու-
թեան մասնակից եակների, իրրեւ սրբերի վերայ,
Քրիստոնէութեան առաջին դարերում հայոց եկե-
ղեցիները և վանքերը մեհեաններից ժառանգելով
նոցա նիւթական հարստութիւնը, իւրեանց սեփա-
կանացրին և նոցա ուսումնարաններ պահելու ար-
տօնութիւնը:

Եղաւ մի փոքր ժամանակամիջոց մինչև ան-
գամ, երբ և քրիստոնէական ուսումնարանները
մասնաւոր, կաստային բնաւորութիւն ընդունեցին,
Այդ այն միջոցն էր, երբ Գրիգոր Լուսաւորիչ կա-
մենալով գրաւել և վարձատրել իշխանութիւնից և
նիւթական կարողութիւնից զրկուած քրմերին, նո-
ցա որդիների համար քրմական դպրոցներ հաստա-
տեց: բայց այդ ժամանակամիջոցը շատ կարճ եղաւ,
որովհետեւ ինքը քրիստոնէութիւնը, ըստ իւր էու-
թեան և բնաւորութեան պարունակում է այնպիսի
ընդհանրական և ընդարձակ գաղափարներ, որ ոչ մի
կերպով չէ կարելի սահմանափակել մասնաւորել,
Լուսաւորիչը շտապեց քրմական դպրոցների մօտ և
աշխարհական դպրոցներ բանալ, որպէս զի քրիս-
տոնէութեան ճշմարտութիւնները շուտով ընդհանրա-
կան հայաստանում ձիւղ է, հայոց այդ առաջին
քրիստոնէական դպրոցներում ազգայնութեան գա-
ղափարը նոյնպէս մի առանձին տեղ չընկեց, որով-
հետեւ առաջին ուսուցիչները հայ չէին, այլ ասորի
և յոյն, մինչև անգամ դասաւանդութեան լեզուն
և ձեռնարկները ևս հայերէն չէին, որովհետեւ գեո-
Ս. Գիրքը թարգմանուած չէր հայերէն, բայց և
այնպէս նորանով արդէն, որ ժողովուրդը աշխար-
հական դպրոցների միջոցով մօտ գործեց ուսում-
նարան, ազգ և ազգայնութեան գաղափարն էլ
սկսաւ կամաց—կամաց արծարծուել, Հինգերորդ

դարում Հայոց գրերի գիւտի Ս. Գրքի թարգմանութեան և մի խումբ արտասահմանում կրթուած երիտասարդ հոգեւորականների ձեռքով հայոց ուսումնարանական գործը սկսաւ հսկայական քայլերով առաջ գնալ, զարգանալ և տարածուել ժողովրդի մէջ և որ գլխաւորն է—նոցա մէջ մտաւ ազգային գաղափարը, Քրիստոնէութիւնը, որի ճշմարտութիւնները հայերը միայն այդ ժամանակ լիովին ըմբռնեցին, հայացաւ և բազմաթիւ ժողովրդական դպրոցների միջոցով կազմակերպուեցաւ հայոց եկեղեցին, որի մէջ կրօնականը և ազգայինը այնպէս զուգակաւ աճեցան, այնպէս միացան, որ կազմեցին մի անբաժան մարմին, Այնուհետեւ հայ ասելով, սկսան հասկանալ Լուսաւորչի եկեղեցուն պատկանող քրիստոնեային և ընդհակառակը, Վեցերորդ և եօթներորդ դարում հայոց ուսումնարանական գործը շարունակեց զարգանալ նոյն ճանապարհով, ազգայինը և ժողովրդականը քանի գնաց աւելի տեղ բռնեց դպրոցներում, նամանաւնդ որ քաղաքական գծաւդ հանգամանքներում հայերը միակ միութեամբ գտնուեցին իւրեանց ազգային գոյնով մկրտուած եկեղեցում ու նոցա նախագաւթ գրպոցներում, Այդ ժամանակուայ Հայոց դպրոցների դասաւանդութիւնը մի կենդանի ուսմունք էր, որ ըստ ամենայնի, համապատասխանում էր ժամանակի պահանջներին, Հայ միտքը ոչնչով չէր կաշկանդուած, ուսուցիչն էլ, աշակերտն էլ ազատ մտածում, ազատ դատում և ազատ գործում էին, ձեւապաշտութիւն չկար, դպրոցը նման էր մի մեծ գերդաստանի, իսկ ուսուցիչը մի սիրող հօր, որ խրատում և ուսուցանում էր իւր որդիներին, Այս դասաւանդութեան եղանակը թարգմանիչները բերել էին Յունաստանից, այդպէս էին սովորեցնում, յոյն փիլիսոփաները իւրեանց աշակերտներին, Այդպէս էին ահա սովորեցնում Սահակ և Մեսրոպը և իւրեանց աշակերտները Վաղարշապատի և այլ դպրոցներում:

Աւթերորդ դարում Հայաստանին տիրեցին Արաբները և այն ժամանակից մինչև ցայսօր ծանրացաւ մեր վերայ մահմետական լուծը, Անցան Արաբները, եկան ուրիշ ազգեր, բայց իսլամները մինչև ցայսօր տիրող են եղած մեր երկրում, Հայը շրջապատուած այլակրօն ու այլադաւան թշնամիներից իւր ազգութեան փրկութիւնը սկսաւ տեսնել եկեղեցու և լեզուի մէջ, եկեղեցի և լեզու, լեզու և եկեղեցի—որքա եղան հայի նշանաբանների այդ պատճառով ևս հայոց դպրոցներում բոլոր դասաւանդութիւնը սահմանափակուեցաւ հենց այդ երկու առարկայով, Իսլամը ամեն երկրներում թողնել էր իւր հետքը, նորա ազդեցութիւնը տարածուեցաւ հայ մարդու վերայ, դրեց իւր կնիքը նորա

լեզուի, սովորութիւնների և քնաւորութեան վերայ, չինայեց հայ բնական քիչ և վերջապէս մտաւ հայի սրբութեան նախագաւթը—գպրոցը և տուեց նորան «մեդրեսային» քնաւորութիւն, Հայ միտքը կաշկանդուեցաւ, ազատութիւնը կորցրեց, առաջուայ կենդանութիւնն ու թարմութիւնը տեղի տուեց մեղմնող շարութեան, այլ ևս հոգի չկար, դիրք միայն մնաց, Ահա այստեղ պէտք է որոնել Հայոց ուսումնարանական գործի խալֆայականութեան սկիզբը, ճիշդ է, յետագայ ժամանակներում հայոց ուսումնարանները ենթարկուեցան և ուրիշ ազդեցութեան, միջնադարեան սքոլաստիք ուղղութեան, որ բերին Աւիտորները և Խաչակիրները, բայց մեդրեսային սպաւորութիւնը դորանով չվերջացաւ, Երբէք չեմ մոռանալ այն սպաւորութիւնը, որ իմ վերայ թողել է մահմեդական մեդրեսէն, 1882 թուականն էր երբ ես վերջին անգամ այցելելով հայրենիքս, պատահեցայ Երևանում, Մէկ օր ես գնացի քաղաքի մայր մզկիթը, որ տեղացիներից կոչուում է «Կեօք Մաջիտ», Դա մի պարսկական ճաշակով ու ճարտարապետութեամբ կառուցած շինութիւն է, որ իւր տեսակում գեղեցիկ կարելի է կոչել, հրապարակի մէջ տեղը շատրուան, իսկ չորս կողմը թուն մզկիթը և նորան վերաբերեալ շինութիւնները, խցերը, մեդրեսէն և այլն, Յիւրեկուայ 12 ժամն էր, ճաշի ազանի ժամանակ, երբ ես մտայ մզկիթի հրապարակը, Ամեն տեղ խորհրդաւոր խորին լուսութիւն էր, միայն լսուում էր բազմաթիւ ջերմեւանդ «նամազ» անողների շշուշը և կարկաշատ շատրուանի խոխովում, իսկ այդ բոլորի վերայ իշխում էր երկու վերամբարձ ասղանման, մողայիկով զարդարուած մինարէ, որոնցից մէկի ծայրին շրջադայելով երգում էր իւր սովորական ազանը հերթապահ մոլլան, «Ալլահու ահմարու, լա իլա իլ Ալլահ, Մուհամմէդ ռասուլ Ալլահ», Նորա ձայնը նուրբ էր և բարձր և իւր քաղցր, բայց մեզ համար անսովոր ելեւէջներով գրաւում էր օտարականիս ուշադրութիւնը, Ինչ ասել կուզի, որ ես աւելի հետաքրքրուեցայ մեդրեսայով, Հեռու պէտք չէր գնալ, աշակերտները, երեւի զովութեան պատճառով տեղաւորուած էին բացօթեայ շատրուանի մօտ, Մէջտեղը չըքած էր մոլլան իւր ղուռանով, գրելու պարագաներով և ապակեայ գեղեցիկ գաղտակուրով զարդարուած դայլանով, նորա չորս կողմը շարուած էին աշակերտները, ծալապատիկ ծունկերի վերայ բաց գրքերով և անհրաժեշտ գրութիւն—դայլանով, Նոքա բարձր ձայնով սերտում էին ղուրանից ամենի համար առանձին նշանակուած դասերը, ճիշդ այնպէս, ինչպէս մենք անում էինք մեր խալֆայական դպրոցներում, Աշակերտների դաս սերտելու, ուսուցչի դաս հարց-

նկու ձևը և առհասարակ դպրոցի բոլոր սարգ ու կարգը բոլորովին նման էր մեր հին դպրոցներին, ես մօտեցայ հարց ու փորձ արի, խօսեցի եւրոպական դասաւանդութեան եղանակի մասին, բայց մոլլան իմ ամեն մի հարցմունքիս միայն քմիծաղ պատասխանում էր՝ «Արի, սարքարամ, խոր միգույիգ, ամ մա ալբիգար նամիֆարմայագ» — այո՛, պարոն, լաւ էք ասում, բայց գիրքը (դուրանը) չէ հրամայում, նոյն պատասխանը յետոյ ես լսեցի Գանձակի գըլխաւոր մուլլայից, երբ ես այցելեցի այն տեղի մեգրեսէն և մի գիտնական մոլլայից, որին ես պատահեցայ Գանձակի գաւառի Գետաշէն գիւղում: Միտս եկաւ՝ «գիրն սպանանէ—հոգին կեցուցանէ»:

(Կը շարունակուի):

Ե. Ծ.



ՃՐԱԳԱՆՈՒՑԻ ԵՐԵԿՈՅ.



Աւրա և մառախլապատ երեկոյ էր: Մի բարձրահասակ հիւանդոտ մարդ յենունով ձեռնափայտին՝ գանդաղ քայլերով անցնում էր Փարիզի Մաղարինի կոչուած փողոցով, Ծերունու հագուստը շատ քիչ էր պաշտպանում նրան սաստիկ քամուց. ամառուայ վարտիք մինչև վիզը կոճկուած հին բաճկոն և լայնաշուրթ գլխարկ, որ ծածկում էր ամբողջ երեսը—ասա այն ամենը, որ պատսպարում էր նրա նիհար մարմինը: Նրա ալեգարդ մագերը երկայն գանգուրներով թափուած էին ծոռուած ուսերի վերայ, Ծերունու ձեռքում կար դունաւոր թաշկինակի մէջ փաթաթած մի բան:

Նա անցաւ կամուրջը, Պառուսերի հրապարակը և հասնելով Պալէ—Ռոյալին՝ յանկարծ շուռ եկաւ՝ լուսոյ ալիքները և համեղ խորտիկների հոտը գրաւեցին նրա ուշադրութիւնը Ապա տատանուելով հազիւ հազ հասաւ նա Ջորրուի հրապարակը, Այստեղ բարձրացնելով իւր գլուխը և տեսնելով լուսաւորութիւն ամեն մի պատուհանում, այդ աշխատողների փեթակում՝ ուր կեանքը

ծննդեան տօներէ պատճառով ջրի նման եռ էր գալիս, նա կանգ առաւ երկայն բուլվարի ծայրում. ծերունիը տեղաւորուեց երկու պատերի մէջ, փայտը գրեց պատի մօտ և բացեց իւր թաշկինակը՝ թաշկինակի մէջ փաթաթած էր նրա ջութակը:

Համոզուելով, որ բոլոր լարերը ողջ են, ծերունին դողդոջուն մատներով կարգի բերեց, բայց լրսուեցին այնպիսի տխուր—տրտում հնչիւններ, անհարթ մեղեդիներ, որ մօտը կանգնող շարաճճի տղերքը կուշտ—կուշտ խնդալով և աղաղակ բարձրացնելով փախան, Մի շուն, որ մօտիկ նստած էր, սկսեց տխուր ձայնով ոռնալ, իսկ անցնող—գարձողները շտապում էին հեռանալ:

Ծերունին յուսահատ ընկաւ բուլվարի մոտքի առաջ. խիստ հառաչանքներ դուրս թռան նրա կրծքից. «Տէր Աստուած, միթէ ես էլ չեմ կարող նուագել»

Այդ իսկ ժամանակ երկայն, մութ բուլվարից—ծերունու կողմն էին գալիս երեք երիտասարդ ուսանող, ուրախ ուրախ մի նոր երգ երգելով, նրանք շնկատեցին ծերունուն՝ մէկը յանկարծ դիպաւ նրան, միւսը վայր ձգեց նրա գլխարկը, իսկ երրորդը զարմացած կանգնեց յանկարծ, իւր առաջ մի երկար չոր կմախք տեսնելով:

—Ներեցէք, խնդրեմ: Ես ցաւ չը տուի՛ արդեօք Ձեզ ասաց նա:

—Ոչ, պատասխանեց ջութակահարը, դժուարութեամբ թեքուելով, որ վերցնի գլխարկը: Բայց իսկոյն երիտասարդներից մէկը, վերցնելով գետնից գլխարկը և տալով ծերունուն, նկատեց նրա ջութակը:

—Դուք երաժիշտ էք:

—Երբեմն էի, յոգւոց հանեց ծերունիը, և արտասուքի երկու կաթիլ դրոշուեցան նրա կնճռոտ թշերի վերայ:

—Ի՞նչ է պատահել Ձեզ, հիւանդ էք. արդեօք չե՞նք կարող Ձեզ օգտակար լինել:

Ծերունիը նայեց նրանց վերայ և տարածելով գլխարկը—չնչաց:

—Ողորմութիւն արէք ես ոչինչ չեմ կարող վաստակել իմ նուագածութեամբ. մատերս կոշտացել են իսկ իմ աղջիկը տանը մեռնում է թոքախտից, գուցէ և աղքատութիւնից: Ծերունու ձայնի մէջ լսուում էր այնքան վիշտայնքան տանջանք, որ երիտասարդները մի տեսակ սարսուռ զգացին և իսկոյն ձեռները գրպանները տանելով հանեցին՝ ինչ որ գրպաններում ունէին. մէկը 50 սանտիմ, միւսը—30, երրորդն էլ կանիֆօլի կտոր. ընդամենը 16 սու յօգուտ այդ սարսափելի չքա-